

ԱՅԼԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ
ՄԵՁ

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լեզվական արվեստան ուսումնասիրելիս, ի թիվս այլ հարցերի, քննության են առնվում պատկերավորման լեզվական միջոցները, զրանց շարքում նաև այլաբերությունները:

Այլաբերությունը ոճական հնարանք է: Այն սահմանվել է որպես իմաստային բարդ երևույթ՝ «մի բառի փոխարինումը մի ուրիշ բառով՝ նրանց իմաստների նմանության կամ առնչության հիման վրա»¹: Այլաբերությունները մեծ կիրառություն ունեն ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում՝ հատկապես գեղարվեստական գրականության մեջ:

Հայ գրականությունը հարուստ է այլաբերություններով, իսկ դարասկզբի արևմտահայ պոեզիայի գազաթխերից մեկի՝ Միսաք Մեծարենցի բանաստեղծական աշխարհն այս առումով բացառություն չի կազմում: Բազմազան ու բազմապիսի այլաբերությունները, որոնք բանաստեղծն օգտագործում է իր, կարելի է ասել, բոլոր բանաստեղծություններում², խոսքը դարձնում են գրավիչ, իմաստալից, շարժուն, օժտում լրացուցիչ հուզականությամբ, բանաստեղծականությամբ:

Այլաբերությունների դասակարգման վերաբերյալ եղել են և կան բազմաթիվ կարծիքներ: Ավելի ընդունված է այն բաժանել երկու հիմնական տեսակի՝ փոխաբերության (մետաֆոր) և փոխանունության (մետոնիմիա)³: Նախ խոսենք Մեծարենցի քնարերգության մեջ տեղ գտած փոխաբերությունների մասին:

Փոխաբերությունը «բառի կամ բառակապակցության փոխաբանական այնպիսի գործածությունն է, որի հիմքում տարբեր առարկաների և երևույթների նմանությունն է կամ համեմատական լինելը»⁴:

Փոխաբերության մի տեսակն է բնության շնչավորումը: Հայ հոգևոր և գիտական մտքի տիտաններից մեկը՝ Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանը դրում է. «Ի՞նչ է բնությունը և արտաքին աշխարհը՝ առհասարակ՝ առանց ներքին տեսության, իմացական լուսավորության, չոր մեքենականություն՝ անխոս և անիմաստ»⁵:

Բնության շնչավորման հետևանքով անշունչ առարկաները, բույսերը, կենդանիները և այլն միս ու արյուն են առնում, դառնում այս

1 Է. Գ. Ջրբաշյան. Գրականության տեսություն. Երևան, 1980, էջ 233:

2 Թեղևս բացառություն պիտի համարել միայն «Մահը» բանաստեղծությունը, որ մանկական զրույց է:

3 Հմմտ. է. Գ. Ջրբաշյան. նշվ. աշխ., էջ 234:

4 Պ. Պոդոսյան. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ. Երևան, 1991, էջ 35:

5 Գարեգին Ա Կաթողիկոս. Դեպի լույս և կյանք. Երևան, 1994, էջ 37:

կյանքի լիարյուն գործող անձ, ապրում ու շնչում մարգկանց նման: Սրա օգնությամբ հեղինակն ավելի հուզիչ կերպով է կարողանում արտահայտել իր ապրումներն ու զգացումները: Այս երևույթը ոճագիտության մեջ կոչվում է դիմառնություն: «Դիմառնություն է առաջանում, երբ ... անշունչ առարկաները շնչավորում, նրանց վերագրում ենք կենդանուն կամ մարդուն հատուկ հատկանիշներ, անշունչ առարկաներին ու կենդանիներին՝ բանականություն և խոսելու շնորհ»⁶:

Մեծարենցի բնութենապաշտ հեղինակ լինելու մասին գրականագիտության մեջ շատ է խոսվել⁷, և փաստ է, որ նրա բանաստեղծությունների մի զգալի մասը նվիրված է բնության նկարագրությանը: Ահա այս բանաստեղծություններում էլ գործում է դիմառնությունը, ինչպես, օրինակ, «Արևագալ» բանաստեղծության մեջ՝

Հորիզոնեն վար լույսի պար մը կ'իջնե,
Ընդելուզված՝ ճաճանչներով ոսկեհյուս.
Շուտ կ'անհետի մութն ու խավար կու տա խուլյս,
Աչխարհ արփվույն հուր գալուստը կ'ողջունե ...⁸:

Խավարը փոխվում է լույսի, բացվում է առավոտը՝ բարին ավետելով մարդկանց: Շնչավորված բնությունը փառաբանում է արարչական լույսը, որ գալիս է ծագելու աշխարհի վրա և մարգու հոգում: Առհասարակ մեր գրականության ու իրականության մեջ արևագալը միշտ էլ գովերգվել է հատուկ սիրով ու ջերմությամբ, վկան՝ մեր եկեղեցու Արևագալի ժամերգությունը, չքնաղ Արևագալի շարականները՝ Շնորհալու «Առավոտ լուսո»-ն և այլն, ինչպես. «Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալդ ի լոյս յանմատոյց Հայր երկնաւոր, ի դասուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր գլոյս քո իմանալի»⁹:

Լույսը գառնում է գեղեցիկի, վեհի, ամենայն լավի խորհրդանիշ, ինչը հետագայում էլ իր գրսևորումները պիտի գտներ մեր գրականության մեջ. Սևակ՝ «եղիցի լույս», Դավթյան՝ «Լույս առավոտի» և այլն:

Իր այլ բանաստեղծություններում ևս Մեծարենցը, դարձյալ դիմառնության հնարանքի միջոցով, անգրագարձել է արևածագին, ինչպես՝

Խաչ հանեցեք ու ծա՛փ գարկեք, կարմրություններ հինայի
Եվ արփածին թուլրեր հագած՝ առտուն մեզի կը նայի ... (106):

Հաճախ բնության շնչավորման միջոցով հեղինակն արտահայտում է զգացումներ ու խոհեր կյանքի, սիրո և այլնի մասին: Ինչպես նկատում է հետազոտողը, «Բնությունը ... ծառայում է բանաստեղծին իբրև միջոց՝

6 Պ. Պոդոսյան. նշվ. աշխ., էջ 185:

7 Հ. Թամրազյան. Բանաստեղծության հազարամյա խորհուրդը. Երևան, 1986: Ա. Մ. Շարունյան. Միսաք Մեծարենց. Երևան, 1983: Է. Գ. Ջրբաչյան. Միսաք Մեծարենց. Երևան, 1977 և ուրիշներ:

8 Մ. Մեծարենց. Երկերի լիակատար ժողովածու. Երևան, 1981, էջ 18 (այսուհետև մեջբերումների էջերը տե՛ս տեքստում փակագծերի մեջ):

9 Խորան լուսո. Երգ Արևագալի. Երևան, 1993, էջ 15:

դրսևորելու մարդկային կյանքի մի պատահիկ, բացելու բնավորության մի գիծ, հոգու մի ծալք»¹⁰:

Այսպիսին է «Իրիկունը» բանաստեղծությունը: Արևի ցուլքն ու ծաղիկը սիրում են միմյանց. սա Մեծարենցն արտահայտում է հետևալ տողերի մեջ.

Խանդաղատանքի մեջ, ցուլք ու ծաղիկ,
Քաժանումներու ցավին անդիտակ,
Արբշիռ փարումով սիրո խաղաղիկ
Վայելքին թովքը կ'ըմպեն անուշակ ... (159):

Մարդկայնացված է պատկերը, բնության երևույթները մարդկային հոգու թարգմանն են դարձել: Թեմայի նմանատիպ մեկնաբանությունն էլ, անշուշտ, նոր չէր հայ գրականության մեջ, արծարծվել էր միջնադարում, երբ բաղձաթիվ հայ տաղերգուներն անդրադառնում էին սոխակի և վարդի սիրավկալին, ինչպես, օրինակ, Գրիգորիս Ախթամարցին իր տաղերից մեկում.

Վարդըն կասե՛ Պլպու՛լ, երգե՛.
Քաղցըր ձայնիվ եղանակե՛.
Ով որ ըգքո՞ ձայնըդ լսե,
Նա հիանա, զմեզ երանե ...¹¹:

Բնության հետ զրույց բացելիս՝ Մեծարենցը մի շարք դեպքերում, կապված ասելիքի առանձնահատկությունների հետ, շնչավորել է հատկապես գիշերը, արևը, լուսինը, աստղերը, օրինակ՝

Ու՛ թիկնադարձ՝ արևն ա՛լ տուն կդառնա
Լեռներեն վեր՝ ինչպես մշակն իջավ գյուղ ... (105):

Երեկոյի պատկերն ստեղծելու համար այս երկտողի մեջ Մեծարենցը դիմել է և՛ փոխաբերության՝ շնչավորելով արևը, և՛ համեմատության՝ արևի մայրամուտը նմանեցնելով տուն դարձող մշակի:

Տարօրինակ չէ, որ Միսաք Մեծարենցի ամենահայտնի բանաստեղծություններից մեկը վերնագրված է «Արևին»՝

Մառախլապատ Երկունքիս մեջ՝
Ուր մտածումը կը դեգերի ուղեմուլար
Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ ... (70):

Այստեղ արևը ներկայացված է որպես մի գթառատ քույր, որ պիտի դա ցավերը դարմանելու, բուժիչ ջերմություն տալու մարդուն: Այս ոտա-

10 Ա ո տ. Պ ա պ ո յ ա ն. Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը. Երևան, 1970, էջ 252:

11 Հայ հին և միջնադարյան քնարերգություն. Երևան, 1987, էջ 303:

նավորի մասին շատ են խոսել գեուես ժամանակի քննադատները¹²: Մասնավորապես այն «առիթ էր տվել» ենովք Արմենին հերթական թունոտ հարձակումը գործելու հեղինակի վրա: Այս հարցին անգրադառնալով իր «Քննադատություն» հոդվածում՝ Մեծարենցը գրում է. «Տակավին պահեստի դիտողություն մըն ալ ունի ենովք Արմեն. «Արևին» բանաստեղծության մեջ սա երկտողը կա.

*Թող հոգվույս մեջեն անցնին կարգավ
Մանուկներն ընգարմացած.*

Այս տողերն ալ հպելով իր խտրոցին, ենովք Արմեն պիտի գոչեր. «Ի՞նչ, հոգիին մեջ մանուկ կրնա՞ ըլլալ»: Որովհետև ենովք Արմենի միտքը ընդհանրապես գրականության ու մասնավորապես բանաստեղծության անընդունակ միտք մըն է: Ու չի կրնար իմաստի պատիկ կրճատումները լայնել ու հասկնալ անմիջապես, թե, օրինակի համար, մանուկը ամփոփ փոխաբերությունն է հոս մանուկ զգացումներուն, տենչերուն, հույսերուն, բաղձանքներուն, որոնք երկար ատեն ընդարմացած՝ արևին կենսաբաշխ ճառագայթներուն պետք ունին վերսթափելու համար» (258-259):

Ինչպես տեսնում ենք, Մեծարենցն ինքն է բացատրում իր փոխաբերությունը, որն այնքան նուրբ է, քնարական և, կարելի է ասել, անհասանելի, որ տարակարծությունների առիթ, իրոք, կարող էր տալ սովորական «ավանդապաշտ» ընթերցողներին:

«Լուսնակ քուրիկիս» բանաստեղծության մեջ Մեծարենցը գծում է լուսնի կերպարը: Ո՞վ է, ի վերջո, գիշերային լուսատուն, անհաս գեղեցկուհի՞, սրի «հեռավոր պերճանքները» բավական են մեծագույն ուրախություն պարգևելու համար, թե՞ բաղձալի քույր, որին կհասնես նույնիսկ եթե լինի «ամպի ետին ալ պահված»: Լուսնի թեման սերտ կապված է գիշերվա թեմայի հետ, որին նույնպես շատ է անդրադարձել հեղինակը: «Ինքնադատության փորձ մը «Ծիածան»-ին առիթով» հոդվածում Մեծարենցը գրում է. «Գիշերին մեջ չէ՞ ապաքեն, որ երազները ավելի վառ ու արագ վերթևումներ կ'ունենան. գիշերին մեջ ուր չըջանկարը այնքա՞ն հմայիչ կ'ըլլա, և սպասումը՝ ա՛յնքան քաղցրորեն տաժանագին» (242):

Գիշերվա հմայքը մեծ չափով կապված է լուսնի հետ, քանզի՝

*Ու նայեցա հանդիպակաց ծաղկաստանին ալ վրլան,
Լելակներուն վրա կապույտ,
Չքնագ, պչրոտ ու անփուլթ
Գաստակդ էիր երկարեր ... (128):*

Լուսատուն սառն ու անկենդան չէ, այլ շունչ ու հոգի առած, մասնակից մարդու հոգեկան աշխարհի ալերախումբներին: Լուսնի շնչավորման շնորհիվ (ի գեպ՝ ոչ միայն այստեղ, այլև մի քանի այլ բանաստեղծություններում) հեղինակն ստեղծել է կատարյալ պատկերներ: Անշուշտ այս ոտանավորը հայ քնարերգության գոհարներից է:

12 «Մասիս». շաբաթական հանդես. 1907, հունիսի 9, № 28-29, էջ 581-583:

Հաճախ բանաստեղծական մի տան մեջ հեղինակը շնչավորում է բնության այլևայլ իրեր ու երևույթներ, որոնք միասին մի գեղեցիկ ամբողջություն են կազմում: Ահա մի հատված «Անդարձ» բանաստեղծություններից.

Ճամբուն վրա կը կրկնե աղբյուրն անվերջ հեքիաթներ,
Գուռն հիացիկ մանուկի աչքի մը պես է բացվեր.
Ջրարբբին մեջ կ'ուրվագրե լուսինն աղջկան մը պատկեր ... (91):

Համապատկերում բացված է չքնաղ գիշերային տեսարան, որն ստեղծելու մեջ մեծ է փոխաբերությունների, ինչպես նաև գուռի և մանկան համեմատության գերը, որոնք միաձուլվելով պատկերը դարձրել են կատարյալ:

Հաճախ բնության շնչավորման երևույթը և այլ փոխաբերություններ օգտագործվում են շեշտելու համար այն գաղափարը, որ մարդը բնության անքակտելի մասնիկն է, օրինակ՝

Երբեմն ամպետ երկինք մը՝ շուտ կը պարզվի,
Ու լեղակի լիճ մը կ'լլա՝
Հոգվույս շլացիկ ծովուն դիմաց ... (163):

Քույրեր են երկինքն ու մարդկային հոգին, սակայն եթե երկինքը լեղակի լիճ է, հոգին ծով է՝ անափ ու խոր, որ կարող է լինել հանդարտ, կարող է հուզվել կամ խռովվել, բայց այս երկուսը միշտ էլ միմյանց պիտի ժպտան, միշտ էլ պիտի լինեն անբաժան, քանի որ անհնար է մարդուն գատել բնությունից: Անշուշտ անհնարին կլինեն նույն գաղափարն արտահայտել այսքան գեղեցիկ, եթե հեղինակը վարպետորեն չօգտագործեր մի քանի փոխաբերություններ, որոնց շնորհիվ ասելիքը ավելի ազդեցիկ ու դրավիչ է դառնում:

Մեծարենցի ստեղծած փոխաբերություններում առկա է մի երևույթ ևս՝ վերացական գոյականների կիրառությունը թանձրացական նշանակությամբ: Հաճախ շնչավորված վերացական գոյականները հանդես են գալիս գուտ մարդուն բնորոշ գործառույթներով, ինչը շատ է նպաստում խոսքի հուզականացմանը և բանաստեղծականացմանը: Հիշենք «Թրթռումներ» բանաստեղծությունը: Կարելի է ասել, որ այն ամբողջությամբ կազմված է փոխաբերական պատկերներից, որոնք ներկայացնում են սիրահարի հոգեվիճակը:

Ըզգացում մը բյուրեղե,
Ծիածանի երանգով,
Ցավոտ հոգվույս մութին քով
Լույս ակոսներ կը պեղե (33):

Այսպես և այս միջոցներով է ներկայացվում մարդու հոգեկան աշխարհը, որը վիրավոր է, ցաված, «մութ», սակայն բյուրեղե զդացումը

հույս և ուրախությունն է պարգևում նրան՝ փորձելով «պեղել լույսի ա-
կոս»։ Հիրավի, ի՞նչ է մարդը առանց սիրո։ Այս դաղափարը հրաշալի է
արտահայտում Մեծարենցը փոխաբերության միջոցով, որի շնորհիվ ասե-
լիքը լրացուցիչ հնչեղությունն է ստանում։

Նմանաիպ փոխաբերություններ կան նաև «Հիշատակ», «Տեղա-
տարափ», «Կայծեր», «Երազի պահեր» և բազմաթիվ այլ բանաստեղծու-
թյուններում։ Ահա մի հատված «Երազի պահերից».

Մըտածումը, ինչպես ճամփորդ ուղեկորույս,
Կանցնի փութով, անձկագին,
Երկարածիգ, մերթ լուսավոր ու մերթ անլույս,
Ճամբաներեն իմ մտքին (36):

Այստեղ էլ մի քանի փոխաբերությունների և զրանց միահյուսված
համեմատության շնորհիվ հեղինակն ստեղծել է մարդկային հոգեվիճակի
ավարտուն պատկեր. մտքերն ու մտածումները խառնվում են, ուրախ ու
տխուր տրամադրությունները հաջորդում են միմյանց, հաճախ մարզն
ինքն ի վիճակի է հասկանալու իր հետ կատարվածը։ Այս պարագային
միանգամայն տեղին է նաև համեմատությունը մտածման և ուղեկորույս
ճամփորդի, չէ՞ որ հաճախ մարդ չգիտե, թե դեպի ուր են տանում իրեն սե-
փական մտքերը։

Այս առումով հետաքրքիր է նաև «Ցայգն է պայծառ» բանաստեղ-
ծությունը, որտեղ դարձյալ պարզ երևում է մարդու և բնության կապը։
Մոտ է արշալույսը, արթնանում է բնությունը, արթնանում է մարդը. ե-
րազն ու իրականությունը մի տեսակ մոտենում, գրեթե միաձուլվում են։
Հեղինակը բացում է մարդկային հոգու ծալքերը հետևյալ փոխաբերու-
թյամբ՝

Եվ անծանոթ աշխարհներուն՝
Անեզրին մեջ խորհրդագեղ՝
Կանդրադառնա մեջն իմ հոգուն
Կրկներևույթը գունագեղ ... (78):

Անսահման է մարդու հոգին, այնտեղ տեղ կա ոչ միայն այս աշ-
խարհի, այլև անծանոթ աշխարհների, անհուն հեռուների համար, որոնք,
կարծես, իրենց արտացոլքն են գտնում այստեղ։

Մեծարենցի հետ մոտավորապես նույն ժամանակ, արևելահայ
քնարերգության գագաթներից մեկը՝ Վահան Տերյանը, իր «Արշալույս»
բանաստեղծության մեջ դրում էր.

Անհայտ, անհուն հեռուներ,
Ձեր գիրկն առեք իմ հոգին ...¹³

13 Վ. Տ եր յ ա ն. Բանաստեղծություններ. լիակատար ժողովածու. Երևան,
1985, էջ 162:

Բազմաթիվ են այն փոխաբերությունները, որոնք կառուցված են այլևայլ առարկաների, իրերի, երևույթների նմանության վրա, փաստորեն ինչ-որ տեղ հարում են համեմատություններին: Այսպիսի փոխաբերություններով հարուստ է «Հիվանդի հեքեր» եռամաս բանաստեղծությունը, որտեղ նկարագրված են քնարական հերոսի տառապանքները, հիասթափությունը կյանքից, խոր հուսահատությունը: Սակայն ամեն ցավ ունի իր դարմանն ու վերջը, դալիս են հույսն ու ժպիտը՝ ամոքելու «հիվանդին», լույսը ճեղքում է դժխեմ մտածումների մեզը: Մեծարենցը ոտանավորն ավարտում է հետևյալ քառատողով.

Եվ անուրջներ ոսկեզօծ՝
 Լուս՝ մտքիս մեջ կր պարեն,
 Դուրս վանելով անոր հոծ
 Թուխպը լույսի փապարեն (23):

Ահա հոգեվիճակի կատարյալ պատկեր՝ կառուցված փոխաբերությունների միջոցով: Երազանքները մոռացնել են տալիս կյանքի գառնությունը և չքնադ հույսեր ներարկում մարգուն:

Այսպիսի փոխաբերությունները մեծ տեղ են դրավում Մեծարենցի սիրային քնարերգության մեջ, երբ սիրո առարկային տրվում են իրական և երազային ոլորտից վերցված ամենանուրբ ու քնքուչ առարկաների անունները, օրինակ՝

Տո՛ւր համբույրիս խանդոտ՝ շրթունքըդ բուստե
 Հուրի՛ աննյութ, փաղփուկն ծագիկ երազի,
 Ըսպասումի հովեն տենչըս կը մսի՛,
 Ա՛հ, քո սիրույդ ջերմությունով զիս պատե՛ ... (162):

Սրտի տիրուհին աննյութ հուրի է, նյութականը մի տեսակ առօրյա ու սովորական է, և այս փոխաբերությամբ հեղինակն ուզում է շեշտել իր սիրո առարկայի՝ նյութական այս աշխարհից բարձր լինելը: Հերոսուհին փայլուն ծաղիկ է, սակայն երազի ծաղիկ, դարձյալ ոչ այսաշխարհային, դարձյալ բարձր իրականությունից: Տենչը մրսում է սպասումի հովից. հաճախ սպասումը չափազանց շատ անհանգստություն ու տառապանք է պատճառում, և մարդ ընկնում է հուսահատության դիրկը: Բուժումը միայն սերն է, քնքշանքը, «սիրո ջերմությունը», որը և, որպես սպեղանի, քնարական հերոսը հայցում է սրտի տիրուհուց:

Նմանատիպ գեղեցիկ փոխաբերություններով հարուստ է նաև «Կիրակմուտք» ոտանավորը, որ ամբողջությամբ հոգևոր աշխարհի գեղեցկությունների պատկերն է: Սրա բնաբանն էլ՝ «... Եկեալքս ի մտանել արեգականն տեսաք զլոյս երեկոյիս ...», վերցված է «Երգ Կիրակմտից» ժամերգից: Կիրակնամուտ է. եկեղեցիներում մոմեր են վառում, խնկարկում, աղոթում, և հոգևոր խաղաղությունն ու հրճվանքը թափանցում է հավատացյալների հոգիները, լուսավորում նրանց: Ահա այս ամենի մեծարենցյան պատկերումը.

Ջահերն հիմակ կ'երագե՛ն համակ ղյումրյութ ու թառչիչ ...
 Կամարներեն, խորանեն կը ծագին լույս ու ծիծաղ.
 Հոգիս քիչ քիչ կը թաղվի անուրջին մեջ այս չքնաղ:

Հուշիկ փախչող իրիկվան ծիրանի լույսն է գվարթ ... (48):

Փոխաբերությունների մասին խոսելիս չենք կարող չնկատել մի կարևոր հանգամանք ևս: Եթե մակդիրների ստեղծման գործում ամենամեծ դերը կատարում են ածականները, ապա փոխաբերությունների դեպքում այդ գերը պատկանում է բային, և սա պատահական չէ: «Բայն աչքի է ընկնում ոչ միայն իր իմաստաբանական ու քերականական կարգերի ու բառաձևերի հարստությամբ, այլև նախադասության մեջ ունեցած բացառիկ դերով, որով և պայմանավորված է նրա կարևոր դերը նաև խոսքի ոճաբանական համակարգում»¹⁴:

Մեծարենցը դրում է.

Պատուհանեն կը խրկե ինձ հովիկն համբույրն իր մտերիմ ... (45):

Ակնհայտ է, որ փոխաբերության կառուցման մեջ հիմնական դերը բայինն է, քանի որ նա է հովիկին վերադրել որևէ բան ուղարկելու կարողություն, այսինքն՝ մարդկային հատկանիշ: Այստեղ պիտի նշենք նաև, որ «Բայի փոխաբերական – պատկերավոր իմաստը հայտնի է դառնում առավելապես կոնտեքստում: Օրինակ՝ քնել բառի փոխաբերական դործածությունը ակնառու է դառնում Լերմոնտովի հետևյալ տողերում.

Меня могила не страшит:

Там, говорят, страданье спит

В холодной, вечной тишине,

Но с жизнью жаль расстаться мне ("Мцыри")¹⁵.

Այլաբերության մի տեսակ է փոխանունությունը: «Այստեղ մի առարկայի անվան փոխարինումը մյուսով հիմնվում է ոչ թե նմանության, այլ երկու երևույթների միջև եղած որևէ կապի, առնչության վրա»¹⁶:

Փոխանունությունն ունի տարբեր տեսակներ, որոնցից շատերը կիրառել է Մեծարենցը իր բանաստեղծություններում, սակայն ոչ այնքան հաճախ, ինչպես փոխաբերությունները: Նշենք դրանցից մի քանիսը: Փոխանունության մի տեսակն այն է, երբ գործողության, հոգեկան ապրումների փոխարեն հիշատակվում են նրանց արտաքին նշանը, միջոցը կամ արդյունքը¹⁷:

14 Պ. Պ ո ղ ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 251:

15 А. Е ф и м о в. Стилистика художественной речи. М., 1961.

16 Է դ. Ջ ր ք ա շ յ ա ն. նշվ. աշխ., էջ 237:

17 Նույն տեղում:

Այսպես, «Տղու մը մահը» բանաստեղծության մեջ հեղինակը սըտի խոր ցավով նկարագրում է կյանքի դարնանը նույն կյանքին հրաժեշտ տված պատանու թաղմանը մասնակցողների սուգ ու լացը:

Անվերադարձ մեկնումդ, ավաղ, մենք կու լանք
 խուլ հեծքերով ու արցունքով դառնադին,
 եվ կը մարի մեր սըրտին խինդն ու տենչանք ... (142):

Այստեղ մահը բառը փոխարինված է անվերադարձ մեկնում բառակապակցությամբ:

Փոխանունություն է առաջանում նաև այն դեպքում, երբ պարունակվող առարկայի անունը փոխարինում է պարունակյալին¹⁸, օրինակ՝

Ձմեռներուն ես ամպավար հովն ըլլայի,
 եվ անճըրագ խուղերու ճիչն հորձքիս ձուլած,
 Անցորդներու հոգվուն վըրա փշըրվեի ... (114):

Այստեղ էլ «խուղերու ճիչ» ասելով հեղինակն ի նկատի ունի խրճիթներում ապրողների ճիչը:

«Փոխանունության մի առանձին տեսակ է ամբողջ երևույթի կամ առարկայի փոխարինումը նրա մի մասով, հոգնակի թվի փոխարինումը եզակի թվով կամ ընդհակառակն»¹⁹: Այսպիսին է «Ջրտուք» ոտանավորի փոխանունությունը՝

Գիշերային ջրտուքի ժամն է. լույսին մեջ կայնած,
 Մշակն անքուն կըսպասե՛, ոտքը բուպիկ, բահն ուսին ... (94):

Հասկանալի է, որ ջրին սպասողը մի մշակ չէ, այլ բազում մշակներ:

Ուզում ենք առանձին խոսել «Աենպոլիզմ»-ը երգիծական բանաստեղծության մասին: Ոտանավորն ամբողջությամբ կազմված է փոխաբերությունների հիմքի վրա, և նրա որևէ պատկեր չի կարելի հասկանալ ուղղակի իմաստով: Արևմտահայ գրական կյանքը ներկայանում է որպես մի պարտեղ, որտեղ ծաղիկները՝ գրողներ, քննադատներ և այլն, զրուցում են, արտահայտում իրենց կարծիքները: Սա, կարելի է ասել, ոչ թե բանաստեղծություն է, այլ չափածո անգրագարձ իր ժողովածուների մասին եղած կարծիքներին: Ոտանավորում հանգես են գալիս ժամանակի գրական, մշակութային տարբեր գործիչներ՝ բոլորն էլ կեղծանուններով, որոնց վերծանմամբ մեր գրականության մեջ զբաղվել են Վ. Ալազանն ու Վ. Նորենցը²⁰:

Բանաստեղծությունն ունի «Ալփասլանին Հանդական խոնարհություն» ընծայականը, որն արգեն իսկ երգիծական փոխաբերության օրինակ է: Մեծարենցը ծաղրում է Ալփասլանին՝ ժամանակի արևմտահայ բանաստեղծության:

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում:

20 Մ ի ս ա ք Մ ե ծ ա ր ե ն ց. Երկերի ժողովածու. Երևան, 1956, էջ 342-343:

տեղծ Ալեքսանդր Փանոսյանին, որն ուներ հանգարանի համարում: Հեգնված են նաև Մեռճան Բալսամյանը՝ բանաստեղծ, արձակագիր, քննադատ Մերուժան Պարսամյանը, Նովիք Առմանը՝ խմբագիր, հրապարակախոս Ենովք Արմենը և այլք: Օրինակ՝

Ես ժանյակներու անհուն կըրպակն եմ,
Եվ ազնվական կրրունկ կը պագնեմ ... (177):

Այս տողերը հասցեագրված են Մերուժան Պարսամյանին: Մեծարենցը փոխաբերությունների միջոցով ակնարկում է, որ Պարսամյանը սալոնային բանաստեղծ է՝ տարված «գեղեցիկ» բառեր օգտագործելու մարմաջով:

Պիտի չմոռանանք նաև, որ փոխաբերությունը կարող է հանդես գալ որպես մի ամբողջ ստեղծագործություն: Այսպիսի բանաստեղծությունները ևս մաս են կազմում Մեծարենցի ստեղծագործության մեջ: Դրանցից կարելի է հիշել «Գիշերին երազանքը», «Աստղերը», «Գարունը կ'ապրեցնե», «Հովին անցքը», «Սոնադին», «Նավակները», «Մեղունները», «Կապույտ հածումները», «Առնչություն» և այլն: Ահա «Բյուրեղի դյուլթանք» ոտանավորի առաջին քառատողը.

Մանուկ մըն է, որ կայներ դեմն հըրածամ արևին,
Կ'օժե հողին իր շուշան լուսացնցուղ երազով
Ու կը ծըծե հոտեան խտզանքն ու դողն այգուն գով,
Մինչ մեղեսիկ աչուկներն եսին ցոլքով կը վառվին ... (65):

Ինչպես տվյալ տան, այնպես էլ ամբողջ բանաստեղծության մեջ չկա որևէ սլատկեր, որ կարելի լինի հասկանալ ուղղակի իմաստով: Ինչպես ցույց է տալիս ոտանավորի շարունակությունը, մանուկը քնարական հերոսի պայծառ երազներով լցված հողին է, որ կանգնած է «սիրո արեգակի» դիմաց:

Այս համառոտ քննությունից երևում է, որ Միսաք Մեծարենցի քնարերգությունը շատ հարուստ է այլաբերություններով, հատկապես փոխաբերություններով, որոնք անչափ օգնում են խոսքի հուզականացմանը, բանաստեղծականացմանը, լեզվաոճական հարստացմանը, դեղեցկացմանը:

ТРОПЫ В ЛИРИКЕ МИСАКА МЕЦАРЕНЦА

КАРИНЕ АРАКЕЛЯН

Резюме

В статье исследуются стилистические особенности поэзии Мисака Мецаренца на примерах метафоры и метонимии. Трактуются искусность применения вышесказанных средств, их свойство акцентирования эмоциональности и обогащения поэтического слова.